ՀՏԴ 342.7

Իրավագիտություն

Սոսի ԶԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս
E-mail: sosy21@yandex.com

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉՃԱՆԱՉՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԽԱԽՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆ

Չնայած դեռևս 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշված իրավունքները համարվում են համընդհանուր՝ առանց որևէ խտրականության, բայց այն շարունակում է մնալ լոկ հռչակագրային ցանկություն, անհասանելի երազանք: Միջազգային հանրության կողմից քար անտարբերությունն ու անգործությունն առաջ են բերում մարդկության դեմ ուղղված նոր հանցագործություններ, այդ թվում՝ թուրքերի կողմից դեռևս մեկ դար առաջ որդեգրված՝ հայերի ցեղասպանության քաղաքականության շարունակությունը մեր օրերում…

Բանալի բառեր՝ Արցախ, Ադրբեջան, Թուրքիա, ցեղասպանություն, մարդու իրավունքներ, չճանաչված երկրներ, պատերազմ

С.Закаряан

ОБСТОЯТЕЛЬСТВА НЕ ПРИЗНАНИЯ ГОСУДАРСТВА КАК ДОПОЛНИТЕЛЬНЫЙ ФАКТОР МАССОГОГО НАРУШЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

Хотя права, закрепленные во Всеобщей декларации прав человека, принятой ООН 10 декабря 1948 года, считаются универсальными без какой-либо дискриминации, это остается всего лишь декларативным желанием, недостижимой мечтой. Каменное безразличие и бездействие со стороны международного сообщества сегодня ведут к новым преступлениям против человечности, в том числе к продолжению политики геноцида армян, принятой турками столетие назад.

Ключевые слова: Арцах, Азербайджан, Турция, геноцид, права человека, непризнанные государства, война.

S.Zaqaryan

THE CIRCUMSTANCES OF STATE RECOGNITION AS A SUPPLEMENTARY FACTOR OF MASSIVE VIOLATION HUMAN RIGHTS

Although the rights enshrined in the Universal Declaration of Human Rights, adopted by the UN on December 10, 1948, are considered universal, without any discrimination, they remain a declarative wish, an unattainable dream. The stony indifference and inaction on the part of the international community today lead to new crimes against humanity, including the continuation of the policy of the Armenian genoside adopted by the Turks a century ago.

Key words: Artsakh, Azerbaijan, Turkey, genocide, human rights, unrecognized countries, war.

<<Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով>> հղում: Ավաղ, առաջին հայացքից այս պարզ ու աքսիոմատիկ ճշմարտությունն իրականությունից շատ հեռու է: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հեղինակները, երբ ամրագրեցին այս ու բնական այլ իրավունքներ ու ազատություններ, որպես կարևոր պայման դրեցին այդ իրավունքների համընդհանրությունը: Հռչակագրի 2-րդ հոդվածը սահմանում է. <<Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից: **Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում՝ ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ սահմանափակումով պետական կազմավորում** /*ընդգծումը մերն է՝ Ս. Զ.*/>> **հղում:** Ահա այն գլխավոր սկզբունքը, որի մասին մոռացել կամ չեն ուզում հիշել խոշոր պետություններն ու միջազգային կազմակերպությունները, երբ խոսքը վերաբերում է չճանաչված երկրներին: Որովհետև այլ բան է, երբ կոպտագույն ձևով խախտվում են այն երկրի քաղաքացիների իրավունքներն ագրեսիվ պատերազմի հետևանքով, որը չի երևում աշխարհի քաղաքական քարտեզին, և բոլորովին այլ է, երբ պետությունն իրենից ներկայացնում է միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ՝ բոլոր իրավունքներով, պարտականություններով ու պատասխանատվությամբ: Արցախյան շարժման հենց սկզբից՝ 1988 թվականից այսդին, ներառյալ Արցախյան առաջին 1991-1994թթ., 2016 թվականի ապրիլյան քառօրյա և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմները, մշտապես աչքի

է զարնել այն հանգամանքը, որ դեռևս 1948 թվականին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը չի վերաբերում արցախցիներին:

Արցախի Հանրապետության չճանաչվածության պարագան՝ որպես մարդու իրավունքների զանգվածային խախտման լրացուցիչ գործոն, կարող ենք դիտարկել երկու տեսանկյունից՝ խաղաղ և պատերազմական իրադրություններում:

Երբ հարցը քննում ենք խաղաղ պայմանների դեպքում, ապա անմիջապես նկատելի է, որ չճանաչված Արցախի քաղաքացիները զրկված են իրենց խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար միջազգային ատյաններին դիմելու իրական հնարավորություններից: Զրկված են առևտրային, ֆինանսական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտային լիարժեք համագործակցությունից ու զարգացումներից, դիվանագիտական կապերից: Զրկված են մարդու իրավունքների պաշտպանության ու իրավագիտակցության բարձրացման ոլորտում Եվրամիության, Եվրախորհրդի, ՄԱԿ-ի և այլ ազդեցիկ կազմակերպությունների ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունից, այդ թվում՝ կրթական, առողջապահական, էկոլոգիական, հակակոռուպցիոն և այլ ոլորտներում: Չճանաչվածության սինդրոմն իր կնիքն է թողել երկրի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Թերևս անիմաստ է մեկ առ մեկ թվարկել բոլոր այն իրավական միջոցները, որոնցից զրկված են արցախցիները, և որոնք Արցախի միջազգային ճանաչվածության դեպքում կբարձրացնեին երկրի քաղաքացիների կյանքի որակը: Սակայն արժե գլխավոր շեշտը դնել այն իրողության վրա, որ պատերազմական իրավիճակում անհամեմատ մեծ ծավալով են խախտվում Արցախի՝ որպես չճանաչված երկրի քաղաքացիների իրավունքները: Խոսքն առավելապես վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Արցախի դեմ սանձազերծված լայնամասշտաբ պատերազմին, որի ծանր հետևանքը եղավ նույն տարվա նոյեմբերի 9-ին կնքված եռակողմ (Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան)՝ հայության համար դավադիր պայմանագիրը:

Հանուն օբյեկտիվ ճշմարտության պետք է նշել, որ հայկական երկու հանրապետությունների համար խայտառակ պայմաններով այդ պայմանագրի կնքման հարցում մեղքի հավասար բաժին ունեն Արցախի ու Հայաստանի իշխանությունները՝ հատկապես քաղաքական անհեռատեսության և Հայոց բանակին ոչ պատշաճ ուշադրություն դարձնելու տեսանկյունից:[1]

Պատկերն այլ կերպ կլիներ, եթե Արցախը միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսանար: Այդ դեպքում գերտերությունները չէին բավարարվի միայն <<լուրջ մտահոգություն>> հայտնելով կամ ջայլամի քաղաքականություն վարելով, այլ

[1] Ն. Մաքիավելին իր <<Տիրակալը>> աշխատության մեջ դեռևս 15-րդ դարում էր ասել, որ պետությանը պետք են լավ օրենքներ ու լավ բանակ:

կձեռնարկեին զործուն միջոցներ՝ պատժամիջոցներ կիրառելով ահաբեկիչ երկրներ Թուրքիայի ու Ադրբեջանի նկատմամբ:

Այս վերջին պատերազմում հակառակորդ կողմը չի պահպանել ռազմական կանոնների գրեթե ոչ մի նորմ: Չեն պահպանվել անգամ միջազգային իրավունքի <<հայր>> համարվող Հ. Գրոցիի <<Երեք գիրք պատերազմի և խաղաղության մասին>>[1] (տպագրվել է 1625 թվականին) աշխատության մեջ ամրագրված <<արդարացի պատերազմի>> և դաժան ու առավել ցավ պատճառող զենքերի կիրառման արգելքի մասին կարծես թե բոլորի կողմից ընդունված պարզ ու հասկանալի նորմերը:[2] Չեն պահպանվել 1948 թվականի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի[3], 1966 թվականի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին[4] ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին[5] միջազգային դաշնագրերի, 1950 թվականի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[7], Պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի՝ Ժնևյան չորս կոնվենցիաներն ու 1977 թվականի երկու լրացուցիչ արձանագրությունների, 2006 թվականի՝ Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի, 1948 թվականի՝ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի, 1925 թվականի՝ Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ գազերի և մանրէաբանական պատերազմի միջոցների օգտագործման արգելման մասին արձանագրության, 1977 թվականի՝ Շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների ռազմական կամ ցանկացած այլ թշնամական օգտագործման արգելման մասին կոնվենցիայի և մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող բազմաթիվ այլ կոնվենցիաների պահանջները:

Պատերազմի հետևանքով մի քանի անգամ մեծացավ այնպիսի խոցելի խավերի իրավունքների պաշտպանության կարիքը, որպիսիք են զոհվածների

---

[1] *Տե՛ս* ***Гроций Г.*** *О праве войны и мира: Репринт с изд. 1956 г. – М.: Ладомир, 1994. – 868 с.*

[2] *Պատերազմի կանոնների, ռազմագերիների նկատմամբ մարդկային վերաբերմունքի և պատերազմական այլ կանոնների մասին աշխարհում առաջինը հանդիպող աշխատություններից մեկը Մանուի օրենքներն են: Մանուի օրենքները հին հնդկական կրոնա-բարոյախոսական, իրավական նորմերի ժողովածու են՝ կազմված մ.թ.ա. III դարում:*

[3] *Տե՛ս ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ. Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ: Երևան, 2013, էջ 72:*

[4] *Տե՛ս ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ. Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ: Երևան, 2013, էջ 136:*

[5] *Տե՛ս ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ. Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ: Երևան, 2013, էջ 111:*

ընտանիքների անդամները, անհետ կորածները, գերիները, ռազմագերիները, վիրավորներն ու հաշմանդամները, փախստականները, բռնագաղթածները, վերաբնակիչները, ներքին տեղահանվածները: Նրանց թիվն ու խնդիրները պարզապես սոսկալի են:

Առ օրս վերջնականորեն չի լուծվել ռազմագերիների փոխանակման խնդիրը: Զինադադարից բավականաչափ ժամանակ է անցել, սակայն դեռևս չեն գտնվել ու հողին չեն հանձնվել զոհված բազմաթիվ հայ զինվորների աճյունները: Հարյուրավոր զինվորականներ շարունակում են մնալ անհետ կորած անձանց ցուցակում:

Առավել բարդ է ռազմագերիների ու քաղաքացիական գերիների պահման ու հանձնման խնդիրը: Համացանցը լի է այնպիսի տեսանյութերով (որոնք հենց ադրբեջանցի զինվորականներն են տեղադրել), որտեղ ցուցադրվում են, թե ինչպես են կտտանքների ենթարկվում հայ ռազմագերիները, նրանց ստիպում են ֆիզիկական ու հոգեբանական ճնշման տակ համբուրել Ադրբեջանի դրոշը, գլխատում զառամյալ ծերունու և այլ դաժանություններ: Ադրբեջանի իշխանությունները մինչ օրս ԿԽՄԿ-ին, ՀՀ և ԱՀ իշխանություններին հստակ թիվ չեն ներկայացրել հայ գերիների ու ռազմագերիների վերաբերյալ, չեն ներկայացրել նաև տեղեկություններ նրանց պահման պայմանների մասին: Օր օրի ձգձգվում են նրանց փոխանակման ժամկետները: Ավելին, Ադրբեջանում որոշ ռազմագերիների հայտարարել են ահաբեկիչ և որոշել դատապարտել հենց այդ հոդվածով՝ իրենց ազգային օրենսդրությամբ, թեպետ նրանց կարգավիճակը լիովին համապատասխանում է ռազմագերու իրավական դրությանը:

Մտահոգիչ է իրավիճակը՝ կապված փախստականների ու բռնագաղթածների հետ: Որքան էլ ցավալի ու տարօրինակ է, ցայժմ կացարաններով լրիվ չեն ապահովվել Արցախյան առաջին պատերազմի հետևանքով, ինչպես նաև Սումգայիթից, Բաքվից և Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերից Արցախ ու ՀՀ տեղափոխված բռնագաղթածները: Նրանց մեծապես գումարվել են հազարավոր նոր տեղահանվածներ Արցախի բռնագրավված Հադրութի, Շուշիի շրջաններից և այլ բնակավայրերից: Չնայած ԱՀ ղեկավարը հանդես է եկել հայտարարությամբ, համաձայն որի՝ երեք տարվա ընթացքում բնակարաններով կապահովվեն բոլոր փախստականները, բռնագաղթածներն ու հրետակոծության հետևանքով տները կորցրած քաղաքացիները, նշված ժամկետը իրատեսական չէ: Մանավանդ, որ այդ խմբի քաղաքացիներին կացարաններով բավարարելուց բացի պետք է լուծել նաև նրանց աշխատանքով ապահովելու հարցը: Համատարած կրճատումների հետևանքով (մանավանդ տարածքային ստորաբաժանումներում), աճում է գործազրկության մակարդակը:

Բավական մեծացել է նաև ներքին տեղահանված անձանց թիվը: Դա գլխավորապես պայմանավորված է տարածքային կորուստներով: 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ ոչ միայն Ադրբեջանին զիջվեցին

<<անվտանգության գոտի>> համարվող առանձին տարածքներ, այլև թշնամուն հանձնվեցին Աշ Հադրութի և Շուշիի շրջանները, ինչպես նաև տասնյակ գյուղեր մյուս շրջաններից: Ադրբեջանաթուրքական ահաբեկչական խմբավորումների հարձակումների հետևանքով հազարավոր մարդիկ կորցրին իրենց հարազատներին, տունը, գույքը, աշխատանքն ու աշխատամիջոցները: Տեղահանված քաղաքացիների մի զգալի զանգված դեռևս վախենում ու հետաձգում է վերադարձը Արցախ:

Մինչդեռ Միավորված ազգերի կազմակերպությունը, որն իր կանոնադրության 1-ին հոդվածի 1-ին կետով որպես նպատակ հռչակել է <<պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիան կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը>>[1], այդպես էլ գործնական ոչինչ չձեռնարկեց Արցախի առնչությամբ: ՄԱԿ-ն այս անգամ ևս ցուցադրեց իր ձևական բնույթը: Ո՛չ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի <<մտահոգիչ>> խոսքը, ո՛չ Անվտանգության խորհրդի սպասված բանաձևը (որը տապալվեց Մեծ Բրիտանիայի կողմից, քանի որ դեռևս 19-րդ դարի վերջից հենց Մեծ Բրիտանիան է թուրքերի սնել պանթուրքիզմի գաղափարով՝ նրանց նավթին, գազին և բնական այլ հարստություններին տիրանալու նպատակով) որևէ նշանակություն ու ազդեցություն չունեցան: Այսպիսով, միջազգային իրավունքը պարզապես գործիք է խոշոր պետությունների ձեռքին: Ինչ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբին, ապա նա անցած 28 տարիների ընթացքում աչքի է ընկել առավելաբար իր կրավորական, հիմնականում անգործունակ կեցվածքով առ հակամարտությունը: Նշյալ ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից բազմիցս խախտվել է զինադադարի պայմանագիրը (կնքված՝ 1994 թվականի մայիսին), հակառակորդի արձակած գնդակներից զոհվել են բազմաթիվ հայ ժամկետային զինծառայողներ. այս պայմաններում ԵԱՀԿ Մինսկի խումբը ոչ մի դեպքի առիթով որևէ հետաքննություն չի անցկացրել՝ բացահայտվելու մեղավոր կողմը և պատասխանատվության ենթարկելու: ԵԱՀԿ-ն հետաքննելու և մեղավորին պատժի ենթարկելու նախաձեռնությամբ հանդես չի եկել նաև 2016թ. ապրիլյան պատերազմի դեպքում, երբ կային բոլոր ապացույցներն ընդդեմ ագրեսոր Ադրբեջանի: Նման գործելաոճը միայն անվստահություն է ներշնչում այդ կազմակերպության նկատմամբ: Եթե այս անգործությանն ավելացնենք նաև այն,

---

[1] *Տե՛ս ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի և ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ. Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ: Երևան, 2013, էջ 12*

որ մոտ երեսուն տարվա ընթացքում այդ կազմակերպությունը հանդես չի եկել երկուստեք ընդունելի, հակամարտությունը կարգավորող համաձայնագրի լուրջ նախագծով, ապա պարտավոր ենք արձանագրել, որ միջազգային այդ կառույցը չի ծառայում իր նպատակին:

Փաստահավաք աշխատանքներ շատ են տարվել ՀՀ և ԱՀ պետական և ոչ պետական տարբեր մարմինների կողմից, որոնք ամենայն մանրամասնությամբ ու պատասխանատվությամբ ներկայացրել են 2020թ. 44-օրյա պատերազմում թշնամու կողմից ահաբեկիչների ներգրավման, արգելված զինատեսակների օգտագործման, էկոցիդի, գենոցիդի, ռազմագերիներին և քաղաքացիական գերիներին խոշտանգելու վերաբերյալ բազմաթիվ փաստեր ու փաստարկներ: Նշված հանցագործությունների մեծ մասը ներկայացնում է մարդկության դեմ ուղղված ոճիր է, որ կոպտորեն խախտում է միջազգային հումանիտար իրավունքի բոլոր հայտնի ու անհայտ նորմերն ու սկզբունքները:

Հայ հանրությունը չպետք է թույլ տա, որ Ադրբեջանը, Թուրքիան կամ որևէ այլ երկիր ոտնահարեն արցախցիների խաղաղ ապրելու և գործելու իրավունքը՝ նման թշնամական քայլերը պատճառաբանելով սոսկ այն հանգամանքով, որ Արցախը չճանաչված երկիր է: Ճանաչումը, որն առավելապես քաղաքական ակտ է, քան իրավական, պետք չէ սպասել հատկապես այն երկրներից, որոնք իրենց կազմում ունեն այնպիսի ազգային փոքրամասնություններ ու էթնիկ խմբեր, որոնք ևս անկախության են ձգտում /օրինակ՝ Իսպանիա, Մեծ Բրիտանիա, ՌԴ և այլն/: Ճանաչում նախևառաջ կարելի է սպասել այն երկրներից, որոնք նման խնդիր չունեն և դիվանագիտական հարաբերությունների հաստատման հիմքում կարևորում են ռազմական, տնտեսական, մշակութային ու հոգևոր կապերը, և ունեն դարավոր պատմամշակութային առնչություններ հայ ժողովրդի հետ (օրինակ՝ Ֆրանսիան, որն իր աջակցությունն ու զորությունն է ցուցաբերել հայությանը դեռևս Մեծ եղեռնի ժամանակ), Նաև օժանդակություն ու ճանաչում կարող ենք սպասել այնպիսի երկրներից, որոնք ունեն նմանատիպ խնդիրներ (կորսված կամ վիճահարույց տարածքներ) և ընդհանուր թշնամի, ինչպիսին է, օրինակ, Հունաստանը:

Այն երկրները, որոնք ունեն չեզոք դիրքորոշում Արցախի ճանաչման հարցում, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) երկրներ, որոնք վաղուց արդեն ունեն կայուն տնտեսություն ու դինամիկ զարգացում և բավականին ինքնիշխան ու ինքնուրույն են իրենց արտաքին ու ներքին քաղաքական դրույթների մշակման գործում և առանձնացած են աշխարհում տիրող ամենօրյա թոհուբոհից (օրինակ՝ Սկանդինավյան երկրները). բ) երկրներ, որոնք ունեն <<բիզնես ծրագրեր>> ագրեսոր ու ահաբեկիչ երկրներ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ՝ զենքի, նավթի առք ու վաճառք և այլն (Գերմանիա, Ուկրաինա, Բելառուս): Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա հաշվի առնելով այդ տերության տնտեսական ու ռազմական հնարավորությունների հսկայական ծավալն ու

ժողովրդավարական ամուր պետականությունը, ապա նա կարող է գործել լիովին ինքուրույն ու անկախ և ճանաչել Արցախի Հանրապետությունը՝ առանձնապես չկորցնելով քաղաքական ու տնտեսական որևէ լուրջ ռեսուրս: Սակայն, հանուն ճշմարտության պետք է փաստել, որ միջազգային հանրության այս անտարբերությունը խոսում է ոչ այնքան միջազգային կառույցների անգործության ու ձևականության, որքան հայկական դիվանագիտության թույլ լինելու մասին…

ԱՀ-ն չճանաչող երկրների ցանկում առանձնահատուկ ուշադրության և քննադատության կարիք ունի Հայաստանի Հանրապետությունը: Այն զգուշավոր ու խուսափողական քաղաքականությունը, որը որդեգրեց Հայաստանն այս երկարատև տարիների ընթացքում, կարելի է ասել՝ առավելս հիմնազուրկ է: Միջազգային կամ ոչ միջազգային որևէ փաստաթղթով և պատմական, քաղաքական ու իրավական որևէ հիմքով Հայաստանը չի կարող դիտվել որպես ագրեսոր երկիր՝ ճանաչելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, ինչպես մեզ ներկայացնում էին դեռևս անցած դարի 90-ականների սկզբից: Այս հանգամանքը որոշ չափով հիմք հանդիսացավ 2020 թվականի նոյեմբերի 9-ի չարաբաստիկ պայմանագիրը կնքելու ժամանակ: Այսինքն՝ իրավաբանորեն, <<լուռումունջ>> նույնիսկ Հայաստանի Հանրապետությունն է ճանաչում Արցախի՝ որպես Ադրբեջանի Հանրապետության մաս կազմելու իրավական կողմը: Ավելին, Հայաստանի Հանրապետության կողմից այս ժամանակամիջոցում չի որդեգրվել պաշտոնական հստակ դիրքորոշում՝ ուղղված Արցախի քաղաքական ճակատագրի որոշմանը: Արցախի ու Հայաստանի իրավական ու միջազգայնորեն ճանաչված միացումը գործնականում տեղի չունեցավ, թեև համապատասխան որոշում կա դեռևս 1989 թվականից: Ոչ միայն չմիավորվեցինք ու մեկ միասնական պետություն չստեղծեցինք, այլև Արցախն ընդունեց իր սեփական Սահմանադրությունը, ունեցավ իր նախագահը, իշխանության թևերն իրականացնող մարմինները, իր օրենքները…

Նույնիսկ 2017 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Արցախում հաստատվեց կառավարման նախագահական մոդել՝ ի հակադրումն ՀՀ-ի, որտեղ կառավարման ձևը պառլամենտականն է:

Որքան էլ ցավալի, բայց լրիվ հիմնավորված կարելի է համարել Ֆրանսիայի կառավարության մերժումը Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցում, քանի որ Ֆրանսիան պարտավոր չէ ճանաչել Արցախի անկախությունն՝ առաջ անցնելով Հայաստանի Հանրապետությունից: ԱՀ-ի անկախությունն առաջին հերթին պետք է ճանաչի Հայաստանի Հանրապետությունը, որից հետո ճանաչում կարելի է ակնկալել Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից:

Եթե ՀՀ-ն ժամանակին ճանաչեր Արցախի անկախությունը, և դիվանագիտական օղակները նպատակային աշխատեին, ապա ԱՀ-ն այսօր ճանաչված կլիներ մի շարք այլ երկրների կողմից: Չէր լինի 2020 թվականի

սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը, կամ նույնիսկ եթե նոր պատերազմ լիներ, նախկին ԼՂԻՄ-ի տարածքից որևէ հողատարածք չէր կորսվի: Վաղուց ժամանակն է, որ Հայաստանի Հանրապետությունը հետամուտ լինի իր օրինական իրավունքներին ու շահերին:

Արցախում 44-օրյա պատերազմի ընթացքում թշնամու կողմից կատարված բոլոր հանցագործությունների թեկուզ տասը տոկոսն եթե իրականացված լիներ եվրոպական որևէ երկրում, ապա միջազգային հանրության արձագանքը միանշանակ այլ կլիներ: Նույն կերպ, երբ ԱՄՆ-ում կամ Եվրոպայում ահաբեկչական որևէ ակտ է տեղի ունենում, ապա դա մեծ արձագանք է ստանում ոչ միայն ԶԼՄ-ների, այլև բազմաթիվ երկրների կառավարությունների կողմից: Բայց երբ գոյության համար պայքարող, հազիվ 150 000 բնակչություն ունեցող Արցախում պատերազմ է ընթանում Թուրքիայի (83 մլն մարդ)ու Ադրբեջանի (10 մլն մարդ) զորամիավորումների դեմ, ինչպես նաև Սիրիայից, Պակիստանից, Լիբիայից, Աֆղանստանից ներգրաված վարձկանների ու ահաբեկիչների, ուկրաինական <<սպիտակ ֆոսֆորի>> և այլ հանցավոր ահաբեկչական խմբավորումների դեմ, ապա դա Եվրոպային, աշխարհին ընդհանրապես, միայն <<մտահոգության>> տեղիք է տալիս: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված Արցախի դեմ պատերազմը Թուրքիայի իրագործած՝ 1915 թվականի ցեղասպանության շարունակությունն է, որը կրկնվեց խաղաղության և մարդկության դեմ ուղղված նշյալ հանցագործությունը ժամանակին ու հավուր պատշաճի չդատապարտելու ու չպատժելու պատճառով: Քանզի անպատժելիությունը միշտ էլ ծնում է նոր հանցագործություններ, հատկապես չճանաչված երկրների պարագայում:

Իհարկե, ճանաչումը չի լուծի Արցախի բոլոր հարցերը, դրանից հրաշքներ սպասել պետք չէ. պատերազմում են նաև միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ հանդիսացող երկրների դեմ: Սակայն այլ է, երբ պատերազմական իրավիճակում ճանաչված պետության վրա է սևեռվում ողջ միջազգային հանրության ուշադրությունը, և բոլորովին այլ է, երբ պատերազմի մեջ հայտնված երկիրը չկա աշխարհի քաղաքական քարտեզի վրա:

2020 թվականի նոյեմբերի 25-ի՝ Ֆրանսիայի Սենատի որոշումն <<Արցախի ճանաչման անհրաժեշտության>> վերաբերյալ նշանակալից քայլ էր: Ճիշտ է, այդ որոշումը ֆրանսիական կառավարության կողմից այդպես էլ չվավերացվեց, բայց, այնուամենայնիվ, նախադեպը չունեցող որոշում է Արցախի համար: Բազմաթիվ քաղաքներ Եվրոպայի երկրներից ու ԱՄՆ նահանգներից ճանաչել են Արցախի Հանրապետությունը և դիմել իրենց երկրների օրենսդիր ու գործադիր մարմիններին, որպեսզի վերջիններս նույնպես բարձր մակարդակով ընդունեն ու ճանաչեն Արցախի անկախությունը, այսինքն՝ գործընթացը սկսված է:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը :